

**«ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՓՈԽՃԱՆԱԶՄԱՆ և ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ (ԱՓՇԱՏԿ)**

**Հոգաբարձուների խորհրդի 26-րդ նիստ  
Օրակարգ**

*3 փետրվարի 2017թ.*

*Վայրը: Կրթության և գիտության նախարարություն ժ. 15:00- ին*

1. 2016թ. գործունեության տարեկան հաշվետվությունը
2. 2016թ. ծախսերի վերաբերյալ տարեկան հաշվետվությունը
3. Փոփոխություններ խորհրդի կազմում
4. Այլ հարցեր

Հաստատված է  
«Ակադեմիական փոխճանաչման և շարժունության  
ազգային տեղեկատվական կենտրոն» հիմնադրամի  
Հոգաբարձուների խորհրդի նախագահ՝  
Ռոբերտ Սուքիասյան

*Ռոբերտ Սուքիասյան*

---

“ 3 ” *փետրվարի* 2017թ.

2016թ.-ի Տարեկան հաշվետվություն

Վերջին տասնամյակում կտրուկ աճել է գլոբալ ակադեմիական շարժունությունը, և մոբիլ ուսանողների թիվը կրկնապատկվել է: Այսօր մոտ 4 միլիոն ուսանողներ սովորում են իրենց հայրենի երկրներից դուրս, և համաձայն միջազգային կանխատեսումների 2020թ-ին այդ թիվը կհասնի 8 միլիոնի: Մոբիլ ուսանողների թվի այսպիսի աճը նոր մարտահրավեր է երկրների բարձրագույն կրթության համակարգերի և մասնավորապես բարձրագույն ուսումնական հաստատությունների միջազգայնացման համատեքստում: Որակավորումների ճանաչումը և հավաստի տեղեկատվության տրամադրումը տարբեր երկրների կրթական համակարգերի և դրանցում շնորհվող որակավորումների վերաբերյալ հատկապես կարևորվում է թե՛ առանձին տարածաշրջանների, թե՛ գլոբալ առումով:

Արձագանքելով բարձրագույն կրթության գլոբալիզացիայի մարտահրավերներին, ԱՓՇԱՏԿ-ը 2016թ.-ի ընթացքում ակտիվորեն մասնակցել է Յունեսկոյի, Եվրախորհրդի, Եվրահանձնաժողովի կողմից նախաձեռնած քննարկումներին՝ ներկայացնելով նաև ազգային փորձը:

Կենտրոնի անձնակազմի մասնակցությունը միջազգային ծրագրերին, նոր նախաձեռնություններին հնարավորություն է տալիս կենտրոնի փորձագետներին ծանոթանալ միջազգային փորձին և ներկայացնել ազգայինը:


## **1. Տեղեկատվության տրամադրում շահառուներին և գործընկերներին**

2016թ-ի ընթացքում ԱՓՇԱՏԿ-ը շարունակելով է իր հիմնական գործառույթների իրականացումը՝ տրամադրելով տեղեկատվություն ազգային և արտերկրների կրթական համակարգերի, նրանցում շնորհվող որակավորումների, որակավորումների ազգային շրջանակների, նախկին փորձառության ճանաչման, համատեղ աստիճանների և դրանց ճանաչման առանձնահատկությունների, և մի շարք այլ հարցերի վերաբերյալ: Կենտրոնի գործընկերների և շահառուների շրջանակը համալրում են ինչպես տեղական և արտասահմանյան կառույցները, այնպես էլ անհատները:

Համագործակցելով տեղական կառույցների հետ՝ ԱՓՇԱՏԿ-ը հիմնականում տրամադրել է տեղեկատվություն արտերկրների կրթական համակարգերի և դրանցում շնորհվող որակավորումների, ինչպես նաև հայկական դիպլոմների իսկության և դրանց ակադեմիական ու մասնագիտական արժեքի վերաբերյալ: 2016թ-ի ընթացքում շարունակվել է համագործակցությունը ՀՀ նախարարությունների (հիմնականում՝ Կրթության և գիտության, Տարածքային կառավարման, Արտակարգ իրավիճակների, Առողջապահության, Արդարադատության, Պաշտպանության նախարարություններ), դրանց ստորաբաժանումների (քրեակատարողական հիմնարկներ, փրկարար ծառայություն և այլն), ՀՀ բուհերի և այլ պետական ու մասնավոր կառույցների հետ, Հայաստանում գործող միջազգային կազմակերպությունների և դեսպանությունների հետ:

Արտասահմանյան կազմակերպությունների և միջազգային կառույցների հետ համագործակցության արդյունքում ԱՓՇԱՏԿ-ը տրամադրել է տեղեկատվություն ազգային կրթական համակարգի, ուսումնական հաստատությունների և նրանց կողմից շնորհվող որակավորումների, երկրում գործող գնահատման համակարգերի և այլնի մասին: Միջազգային համագործակցության շրջանակը հիմնականում ընդգրկել է ENIC-NARIC (European Network of Information Centres- National Academic Recognition Information Centres) ցանցը, Համաշխարհային կրթական ծառայությունը (World Education Services), Կրթության հետազոտությունների միջազգային հիմնադրամը (International Education Research Foundation), միգրացիոն ծառայությունները, ինչպես նաև օտարերկրյա ուսումնական հաստատությունները և այլն: Գծապատկեր 1-ում ներկայացված է օտարերկրյա համագործակցությունների «աշխարհագրությունը» տոկոսային հարաբերակցությամբ:


Գծապատկեր 1



\* Այլ երկրներ՝ Ավստրիա, Հարավային Աֆրիկա, Բելգիա, Բելառուս, Բուլղարիա, Դանիա, Լատվիա, Լեհաստան, Լիտվա, Ղազախստան, Մոնակո, Նորվեգիա, Մեծ Բրիտանիա, Շվեյցարիա, Չինաստան, Ֆինլանդիա, Ֆրանսիա և այլն:

Հաշվետու տարվա ընթացքում կենտրոնը շարունակել է տրամադրել խորհրդատվություն և տեղեկատվություն նաև անհատներին՝ ինչպես խորհրդատվական և որակավորման գնահատման տեղեկանքների տեսքով, այնպես էլ հաղորդակցման այլ միջոցների կամ անհատական հանդիպումների ժամանակ: Խորհրդատվությունները տրամադրված տեղեկանքի տեսքով ուղղված են խթանելու անհատների շարժունությունը արտերկրներում ուսումը շարունակելիս և/կամ աշխատանքի անցնելիս:

Գծապարկեր 2



Ընդհանուր առմամբ 2016թ-ի ընթացքում կենտրոնի կողմից շահառուներին տրամադրվել է 1213 խորհրդատվություն, որից 144 խորհրդատվական և 7 որակավորման գնահատման տեղեկանքների տեսքով: Ցուցանիշների վերլուծությունը ցույց է տալիս, որ կենտրոնի 2016թ-ի աշխատանքների մեծ մասը բաժին է ընկել տեղական և միջազգային կառույցների հետ համագործակցությանը: Տեղեկատվության տրամադրումն ըստ շահառուների ներկայացված է գծապարկեր 2-ում, որտեղից պարզ երևում է, որ տրամադրված խորհրդատվության հիմնական մասը բաժին է ընկնում արտասահմանյան կազմակերպություններին:

Կենտրոնը ակտիվորեն մասանակցել է նաև ENIC-NARIC ցանցում ընթացող էլեկտրոնային քննարկումներին, հարցումներին և ուսումնասիրություններին: Մասնավորապես անցած տարում արժարժվել են հետևյալ թեմաները՝

- ✦ փաստաթղթերի ապուստիլ (Հաագայի կոնվենցիա, 05.10. 1961թ. ), որպես ճանաչման գործիք և կոնվենցիային միացած երկրների փորձը,
- ✦ ուսանողների գիտելիքների գնահատման ազգային և ինստիտուցիոնալ համակարգերը,
- ✦ դոկտորական աստիճաններ և դրանց տարատեսակները, կրեդիտների շնորհում, ճանաչման առանձնահատկությունները, ընթացակարգեր

- ✚ բժշկական մասնագիտությամբ աշխատելու պահանջներն օտարերկրյա որակավորումների դեպքում,
- ✚ փախստականների որակավորումների ճանաչման մարտահրավերները և ազգային մոտեցումները:

## 2. Օտարերկրյա որակավորումների գնահատում, խորհրդատվական տեղեկանքի տրամադրում

ԱՓՇԱՏԿ-ը այսօր իր կողմից տրամադրած խորհրդատվական և որակավորման գնահատման տեղեկանքների առումով ոլորտում իր ուրույն և կարևոր տեղն է զբաղեցնում: Տեղեկանքները տրամադրվում են հայկական և օտարերկրյա որակավորումներ ունեցող անհատներին՝ ակադեմիական և/կամ աշխատանքային շարժունությունը խթանելու նպատակով: Խորհրդատվական տեղեկանքների զգալի մասը վերաբերում է նաև կանոնակարգվող մասնագիտություններին և այդ մասնագիտություններով աշխատելու պահանջներին:

Գծապատկեր 3



Տեղական և արտասահմանյան որակավորումների առումով տրված խորհրդատվական տեղեկանքների տոկոսային հարաբերությունը ներկայացված է գծապատկեր 3-ում, համաձայն որի տրամադրված խորհրդատվական տեղեկանքների 53% վերաբերում են օտարերկրյա որակավորում ունեցող քաղաքացիներին, իսկ 43.7% հայկական որակավորումներին:

ԱՓՇԱՏԿ-ը 2016թ-ին շարունակել է տրամադրել անգլերեն լեզվով խորհրդատվական տեղեկանքներ այն ՀՀ քաղաքացիներին, ովքեր պատրաստվում են մեկնել ԱՄՆ մշտական բնակության: ԱՄՆ դեսպանության մոտ բազմաթիվ հարցեր են ծագում հատկապես միջին մասնագիտական հին ու նոր

որակավորումների, դրանց մասնագիտական ուղղվածության, ակադեմիական իրավունքների վերաբերյալ:

Որակավորումների գնահատման (ճանաչման) տեղեկանք անհատներին տրվում է այն դեպքերում, երբ վերջիններս ստանալով բարձրագույն կրթության մագիստրոսի կամ այլ համադրելի որակավորում արտասահմանյան որևիցէ մի բուհում ցանկանում են շարունակել կրթությունը Հայաստանում՝ դոկտորանտուրայում (Ph.D): Որակավորման գնահատման համար 2016թ-ին ԱՓՇԱՏԿ ստացել է 7 դիմում՝ Չինաստանում, Իրանում, Վրաստանում, ԱՄՆ-ում, Բելգիայում և Ֆրանսիայում մագիստրոսի որակավորում ստացած քաղաքացիներից: Համեմատելով նախորդ տարիներին տրամադրված տեղեկանքների թվի հետ կարելի է նշել, որ նկատվում է օտարերկրյա որակավորումներով Հայաստանում դոկտորական ծրագրերում ուսումը շարունակել ցանկացողների թվի կտրուկ նվազման միտումներ: ՀՀ բուհերի և գիտահետազոտական ինստիտուտների համար դա լուրջ մարտահրավեր է միջազգայնացման և գիտահետազոտական կարողությունների հզորացման առումով:

### **Հիմնական վիճակագրական տվյալներ**

Ամփոփելով 2016թ.-ի ընթացքում կատարված աշխատանքները՝ կարելի է արձանագրել հետևյալ ցուցանիշները. (տե՛ս Հավելված 1),

- ✦ ուսումնասիրված գործերի ընդհանուր քանակը կազմել է 1213՝ նախորդ տարվա 1095-ի համեմատությամբ
- ✦ ընդ որում տրամադրված խորհրդատվական տեղեկանքների քանակը նախորդ տարվա համեմատությամբ մնացել է նույնը՝ կազմելով 144,
- ✦ գնահատվել և ճանաչման որոշում է կայացվել օտարերկրյա որակավորումների 7 դեպքում,
- ✦ տրամադրվել է 1062 տեղեկատվություն տեղական և միջազգային շահառուներին, որի հիմնական մասը շարունակում է կազմել Վրաստանին տրամադրված տեղեկատվությունը,
- ✦ բացահայտվել են կրթական փաստաթղթերի կեղծման 6 դեպք (որից 3-ը տրամադրվել էին ՀՀ-ում, 3-ը՝ Ռուսաստանի Դաշնությունում): Դրանց վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվել է ՀՀ ԿԳ նախարարությանը:

2016թ-ի ընթացքում կենտրոնի կողմից վերանայվել է նախկինում հաստատված նաև անհատների կողմից լրացվող դիմումի ձևը (տես՝ Հավելված 4): Լրամշակվել է նաև Որակավորման գնահատման տեղեկանքը (տես՝ Հավելված 5), որում հղում է կատարվել 07.07.2016 ՀՀ կառավարության կողմից հաստատված Հայաստանի Հանրապետության որակավորումների ազգային շրջանակին:

Հաշվետու տարվա ընթացքում ԱՓՇԱՏԿ-ը գործարկել է նոր ինտերնետային կայքը, սակայն տեղեկատվության տեղադրումը դեռևս ավարտված չէ: Կայքում նախատեսված է ներկայացնել տեղեկատվություն Լիսաբոնի ճանաչման կոնվենցիայի և իրավական այլ փաստաթղթերի, ճանաչման գործընթացների և ազգային կրթական համակարգի, ՀՀ-ում գործող բուհերի և շնորհվող որակավորումների, ինչպես նաև Բոլոնիայի գործընթացի վերաբերյալ:

### **3. Միջազգային համատեղ ծրագրերի իրականացում**

#### **1. «ԱՐՄԵՆՔԱ - Հայաստանում ազգային և սեկտորիալ որակավորումների շրջանակի իրագործում»**

*“Implementation of national and sectorial qualifications frameworks in Armenia” Tempus* 2016թ-ի ընթացքում կենտրոնը շարունակել է իր մասնակցությունը ծրագրի աշխատանքներին և մասնավորապես դրա շրջանակներում նախատեսված փաստաթղթերի մշակմանը, ինչպես նաև հանդիպումներին: Ծրագիրը, որը նախատեսվում էր ավարտել 2016թ. վերջում, երկարացվել է ևս մեկ տարով: Հաշվետու տարվա մարտ ամսին ԱՓՇԱՏԿ-ը մասնակցել է Մանկավարժական համալսարանում անկացված ոլորտային որակավորումների շրջանակներին վերաբերվող համաժողովին: Նաև ծրագրի կողմից մշակվել և հրատարակվել է ՀՀ *որակավորումների ազգային շրջանակի ներդրման ուղեցուցիչը*: Ձեռնարկի մշակմանը մասնակցել է նաև ԱՓՇԱՏԿ-ը: ԱՐՄԵՆՔԱ ծրագիրը հատկապես կարևոր է կենտրոնի համար, քանի որ 2016թ.-ի հուլիսի կառավարության կողմից հաստատված ՀՀ ՈԱԾ-ը և դրա միջոցով ազգային կրթական համակարգի նկարագրությունը ևս մեկ գործիք է խթանելու որակավորումների ճանաչումը:

#### **2. «Գործիքակազմ փախստականների և տեղահանված անձանց բարձրագույն կրթության ճանաչման համար»**

*“Toolkit for recognition of foreign higher education for refugees, displaced persons and persons in refugee-like situation” Erasmus+*



Ծրագիրը, որը մեկնարկեց 2016թ. հունիսին Օսլոյում, իրականացվում է Եվրոպական հանձնաժողովի աջակցությամբ՝ Erasmus+ ծրագրի շրջանակներում: Ծրագրի նպատակն է աջակցել ENIC-NARIC ցանցի անդամներին՝ ճանաչելու փախստականների կրթությունը և աշխատանքային հնարավորությունները այն դեպքերում, երբ նրանց փաստաթղթերը ամբողջական չեն: Ծրագրի գործընկերներն են՝ NOKUT (Նորվեգիա), UK NARIC (Մեծ Բրիտանիայի), CIPE (Ֆրանսիա), EP-NUFFIC (Նիդեռլանդներ), CIMEA (Իտալիա) և ArmENIC (Հայաստան) տեղեկատվական կենտրոնները:

Ծրագրի իրականացման արդյունքում նախատեսվում է՝

- ✚ 5 ամենաշատ թվաքանակով փախստականներ ունեցող երկրների կրթական համակարգերի նկարագրերի կազմում,
- ✚ փախստականների կրթական փաստաթղթերի ճանաչման համընդհանուր մոտեցման մշակում,
- ✚ ճանաչման գործընթացը դյուրացնելու նպատակով նոր գործիքակազմի՝ փախստականի կրթության անձնագրի մշակում և փորձարկում:

Ծրագրի երկրորդ հանդիպումը տեղի ունեցավ Հռոմում հոկտեմբեր ամսին, որը նպատակ ուներ հստակեցնել կոնսորցիումի անդամների պարտավորությունները և հետագա քայլերը: Հանդիպման ժամանակ որոշում կայացվեց մինչև տարվա վերջ մշակել Սիրիայի, Աֆղանստանի, Իրաքի, Լիբիայի և Էրիտրեայի կրթական համակարգերի նկարագրերը մեկ ընդհանուր ձևաչափով, որոնք հետագայում կտեղադրվեն հասանելի կայքերում և կօգտագործվեն գնահատման մասնագետներին կողմից՝ այդ երկրներից փախստականների որակավորումների ճանաչման դեպքերում: Նկարագրերը հիմնականում նախատեսված են ENIC-NARIC կենտրոնների և բուհերում գնահատման պատասխանատու անձնակազմի համար:

Քննարկվեց նաև փախստականների կրթության ճանաչման գործընթացը դյուրացնելու համար նախատեսված գործիքակազմի մշակումը՝ կրթական փաստաթղթերի ոչ ամբողջական լինելու պարագայում: Որոշվեց 2017թ. գարնանը փախստականի որակավորման անձնագիրը փորձարկել նաև Հայաստանում ի թիվս մյուս երկրների:

### 3. «ՍՔԱՆ-Դ2» Ազգային ակադեմիական դիպլոմների նմուշներ և պատճեններ “SCAN-D2- Samples and Copies of Academic National Diplomas 2 , Erasmus+”

2016թ.-ին ապրիլին մեկնարկեց մեկ այլ ծրագիր՝ ֆինանսավորվող ԵՄ Erasmus+ ծրագրի շրջանակներում՝ «ՍՔԱՆ-Դ2», որը ազգային ակադեմիական դիպլոմների նմուշներ և պատճեններ ծրագրի 2-րդ փուլն է: Ծրագրի նպատակն է ստեղծել ընդհանուր միջազգային տվյալների բազա, որում հավաքագրված կլինեն եվրոպական տարածաշրջանին (ըստ Յունեսկոյի սահմանման) պատկանող

երկրների կողմից շնորհվող որակավորումների ձևանմուշները և դրանց վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունը: Ծրագրի 1-ին փուլին մասնակցել են 14, իսկ 2-րդ փուլին՝ 10 երկրներ: ԱՔԱՆ-Դ2 նախատեսված է որակավորումների գնահատման մասնագետների՝ մասնավորապես ENIC-NARIC գրասենյակների համար:

Ծրագրի անդրանիկ հանդիպումը տեղի է ունեցել 2016թ. հունիս ամսին Ամստերդամում: Ծրագիրը նախատեսվում է ավարտել 2017թ.-ի սեպտեմբերին: ԱՓՇԱՏԿ-ը անցած ամիսների ընթացքում հիմնականում հավաքագրել է ազգային դիպլոմների, վկայականների նմուշները և արդեն սկսել է դրանց տեղադրումը բազայում:

#### **4. «ԲՈՒՍԹ»- Հայկական համալսարանների միջազգայնացման ռազմավարության և մարքեթինգի խթանում**

“Boosting Armenian Universities Internationalization Strategy & Marketing /BOOST, Erasmus+”

Էրազմուս+ ծրագրի շրջանակում իրականացվող ևս մեկ ծրագիր, որի նպատակն է ազգային և ինստիտուցիոնալ քաղաքականության շրջանակի զարգացմամբ խթանել բուհերի միջազգայնացումը: Ծրագիրը ունի 3 տարի տևողություն և պաշտոնապես կմեկնարկի սույն թվականի փետրվար ամսին: Ծրագրի մասնակից երկրներն են՝ Հայաստան, Իսպանիա, Պորտուգալիա, Շվեդիա, և Էստոնիա:

#### **4. Նոր նախաձեռնություններ և հետազոտություններ**

2016թ-ին ԱՓՇԱՏԿ-ը շարունակել է խորհել նոր ծրագրերի և հետազոտությունների վերաբերյալ:

✚ «Սփյուռքի ակադեմիական և գիտական ներուժը ի նպաստ Հայաստանում STEM ոլորտների զարգացմանը» (տե՛ս Հավելված 2) ծրագիրը նախատեսում է աշխարհի լավագույն բուհերից հրավիրել տվյալ ոլորտների առաջատար այն հայ մասնագետներին, որոնք նախկինում ուսանել են ՀՀ բուհերում և ցանկություն ունեն իրենց փորձն ու գիտելիքները փոխանցելու հայ ուսանողներին: Նախագիծը ներկայացնում է գերազանցության ազգային ծրագիր, որն ուղղված է խթանելու STEM ոլորտներում Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատությունների մրցունակությունը և գրավչությունը:

✚ Շարունակվել են աշխատանքները «Հայկական կրթական համակարգի և բուհերի միջազգայնացում» ծրագրի իրականացման համար ֆինանսական աջակցություն հայթհայթելու ուղղությամբ: ԿԳ նախարարության օգնությամբ ԱՓՇԱՏԿ-ը դիմել էր ԱՄՆ դեսպանատուն՝ հաշվի առնելով միջոցառումների մի մասի

իրականացման վայրը: Սակայն դեսպանությունը խոստացել է ֆինանսավորել միայն մեկ կամ երկու անձի ճամփորդական ծախսերը, որը բավարար չէ: Ընթացիկ տարվա ընթացքում կենտրոնը նախատեսում է կշարունակի փնտրել հնարավորություններ 2018թ-ի NAFSA-ին մասնակցելու համար:

#### **4.1 Հետազոտություններ**

ՀՀ որակավորումների ազգային շրջանակի, որը կառուցված է շարունակական կրթության սկզբունքի հիման վրա, մշակման ընթացքում ակնհայտ դարձավ, որ նրանում ներառված չեն լրացուցիչ և մասնագիտական վերապատրաստման արդյունքում շնորհված որակավորումները: Ամբողջական չէ նաև տեղեկատվությունը կարգավորող օրենսդրության, ծրագրերը իրականացնող մարմինների և կազմակերպությունների ու ոլորտային այլ պահանջների վերաբերյալ:

2016թ. հուլիս-հոկտեմբեր ամիսներին կենտրոնը «*Լրացուցիչ կրթության և մասնագիտական վերապատրաստման քարտեզագրում*» թեմայով հետազոտություն իրականացրեց (տե՛ս Հավելված 3): Հետազոտության նպատակն է ՀՀ-ում գործող մասնագիտական որակավորումների բարձրացման, վերապատրաստումների և լրացուցիչ կրթական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը և ներկայացումը: Անհրաժեշտ է հստակ ներկայացնել մասնագիտական վերապատրաստման ծրագրերը, դրանց արդյունքում ձեռք բերվող որակավորումները և այն ոլորտները, որտեղ նման վերապատրաստումները պարտադիր են աշխատանքի անցնելու համար և կարգավորվում են ոլորտի իրավական ակտերով:

Կից ներկայացված է հետազոտության համար նախատեսվող բյուջեն: Քարտեզագրման արդյունքները նախատեսվում է հրատարակել առանձին գրքույկի տեսքով, որը հնարավորություն կտա շահառուներին տեղեկանալու ՀՀ-ում մասնագիտական վերապատրաստում իրականացնող հաստատությունների կողմից շնորհվող որակավորումների համադրելիության մասին:

#### **5. ԱՓՇԱՏԿ-ի մասնակցությունը միջազգային համաժողովներին**

ԱՓՇԱՏԿ-ի երեք աշխատակիցներ 2016թ-ի հունիսի 19-21-ը մասնակցել են Ամստերդամում կայացած ENIC-NARIC ցանցի 23-րդ տարեկան համաժողովին: Միջոցառման ժամանակ ամփոփվել են ճանաչման ոլորտի վերջին զարգացումները և տարբեր կենտրոնների կողմից իրականացված ծրագրերը, ներկայացվել են նոր նախաձեռնությունները: ENIC-NARIC ցանցի 23-րդ տարեկան համաժողովի ընթացքում տեղի են ունեցել ինչպես ընդհանուր, այնպես էլ աշխատանքային խմբերով քննարկումներ: Հանդիպումը ավելի հետաքրքիր և ինտերակտիվ դարձնելու նպատակով՝ կազմակերպիչները ներառել են օնլայն հարցադրման և

քվեարկության համակարգը, ու հանդիպման ընթացքում պարբերաբար մասնակիցներին առաջադրվել են տարբեր հարցեր ներկայացվող թեմաների շուրջ: Համաժողովի ընթացքում տեղի ունեցաց ընդհանուր քննարկումներից առավել ուշագրավ էին.

- ✦ փախստականների կրթության ճանաչման հիմնահարցեր և խնդիրները՝ ներկայացվեց նորվեգական փորձը փախստականներին կրթության անձնագիր տրամադրելու վերաբերյալ,
- ✦ բարձրագույն կրթություն մուտք գործելու համար փախստականների հնարավորությունները, հեռանկարներն ու մարտահրավերները, ինչպես նաև Լիսաբոնի ճանաչման կոնվենցիայի 7-րդ հոդվածով նախատեսված փախստականների ճանաչման դրույթները,
- ✦ միջազգային աշխատաշուկայի և սեկտորիալ որակավորումների շրջանակների վերջին զարգացումներն ու միտումները, հատկապես ճանաչման համատեքստում և դրանց իրավական մարտահրավերները,
- ✦ 2015թ. Երևանի կոմյունիկեում որակավորումների ճանաչման հետ կապված նախարարների հանձնարարականները: Բոլոնիայի քարտուղարության ղեկավարը ներկայացրեց 2015-2018թթ. ծրագրի շրջանակներում իրականացվող աշխատանքները՝ դիպլոմի հավելվածի վերանայումը, նախկին կրթության ճանաչումը, Լիսաբոնի ճանաչման կոնվենցիայի 54 անդամ երկրների կողմից կիրառման մոնիտորինգ հաշվետվությունը:

Այնուհետև ներկայացվեց ELCORE խմբի տարեկան հաշվետվությունը իրենց գործունեության և իրականացվող աշխատանքների վերաբերյալ՝ ENIC-NARIC ցանցի անդամներին էլեկտրոնային տարբերակով տեղեկատվության աջակցության համատեքստում: Ամփոփ ներկայացվեց նաև SQUARE նախագիծը, որի նպատակն է բարձրացնել ENIC-NARIC ցանցի գործունեության, դերի և գործիքակազմի թափանցիկությունը, ինչպես նաև քննարկվեց ցանցի դերի բարձրացումը Եվրոպական բարձրագույն կրթական տարածքում:

2016թ-ի նոյեմբերի 24-25 կենտրոնը մասնակցել է նաև Եվրախորհրդի ETINED Համաեվրոպական պլատֆորմին նվիրված կրթության ոլորտում Էթիկային, թափանցիկությանը և ինտեգրմանը տարեկան հանդիպմանը: Հանդիպման ժամանակ ՀՀ ԿԳ նախարարությունը ներկայացրել է Եվրախորհրդի կողմից համատեղ իրականացվող «Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում բարեվարքության ամրապնդում և կոռուպցիայի դեմ պայքար» ծրագիրը: Ֆորումը անդրադարձել է մի շարք կարևոր հարցադրումների.

- ✦ կրթության բոլոր մասնակիցների բարեվարքության կանոնները,
- ✦ ակադեմիական գրագողությունը և պայքարը դրա դեմ,
- ✦ որակավորումների ճանաչումը՝ կրթական կեղծիքներ, կեղծ դիպլոմներ և վկայականներ:

## **6. Եվրոպական բարձրագույն կրթության տարածք (ԵԲԿՏ)/Բոլոնիայի գործընթաց**

Հայաստանը ակտիվորեն մասնակցում է ԵԲԿՏ-ի հետագա ձևավորման և ամրապնդման աշխատանքներին և հետևողականորեն իրականացնում է Բոլոնիայի գործընթացի բարեփոխումները ազգային մակարդակում՝ ներգրավելով բոլոր շահառուներին: Հիմնադրամը իր գործունեության առաջին օրվանից մասնակցել է գործընթացի գործադիր խմբի աշխատանքներին: 2012-2015թթ.-ին երբ Հայաստանը հանդիսանում էր ԵԲԿՏ-ի փոխնախագահ երկիրը, կենտրոնում ձևավորվել է Բոլոնիայի քարտուղարությունը, որը համակարգել է եվրոպական բարեփոխումների ողջ գործընթացը:

ԱՓՇԱՏԿ-ը շարունակում է մասնակցել Բոլոնիայի գործընթացի կառավարման աշխատանքներին միջազգային հարթակում, մասնավորապես ԵԲԿՏ-ի գործադիր մարմնի (Բոլոնիայի գործընթացին հետամուտ խմբի) ու Բոլոնիայի քարտուղարության աշխատանքներին՝ ապահովելով Հայաստանի շարունակական մասնակցությունը և պահպանելով ուղղակի կապի, փոխշփման և քննարկման հարթակը ԵԲԿՏ-ի անդամ 48 երկրների բարձրագույն կրթության համար պատասխանատու նախարարությունների հետ, ինչպես նաև ներգրավելով Բոլոնիայի գործընթացի համակարգման ու հիմնարար փաստաթղթերի մշակման աշխատանքներին:

## **7. Լիսաբոնի ճանաչման կոնվենցիայի բյուրո**

Հիմնադրամը, ի դեմս իր տնօրենի, շարունակել է ակտիվորեն մասնակցել Լիսաբոնի ճանաչման կոնվենցիայի միջկառավարական կոմիտեի բյուրոյի աշխատանքներին: Հաշվետու տարվա ընթացքում բյուրոյի ուշադրության կենտրոնում են եղել հետևյալ հարցերը.

- ✦ փախստականների որակավորումների ճանաչման վերաբերյալ հանձնարարականի և դրա բացատրական հուշագրի մշակումը,
- ✦ ENIC-NARIC կենտրոնների վեբ կայքերի և ազգային կրթական համակարգերի նկարագրության նվազագույն պահանջները:

Երկու փաստաթղթերի նախագծերը այս տարվա ընթացքում կներկայացվեն Լիսաբոնի ճանաչման կոնվենցիային ստորագրայլ 54 երկրների հաստատմանը:

## **8. Ֆինանսական հակիրճ տեղեկատվություն**

2016թ-ի ընթացքում հիմնադրամի կողմից իրականացված ֆինանսական գործառույթները.

⚡ ՀՀ պետական բյուջեի կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվել է 42 243.6 հազար դրամ՝ դրամարկղային ծախսը կազմել է 41 956.9 հազար դրամ: Ինչպես նաև հիմնադրամը նախորդ ժամանակաշրջաններից Բոլոնիայի քարտուղարության ծրագրից՝ 4037.2 հազար դրամի և այլ դրամաշնորհներից՝ 1 651.0 հազար դրամի ունեցել է տնտեսումներ, որոնք ծախսվել են (համապատասխանաբար 1644.8 հազար դրամ և 1 482.4 հազար դրամ) հիմնադրամի բնականոն գործունեության ապահովման համար:

⚡ Վճարովի ծառայություններից մուտքերը կազմել են 1 289.0 հազար դրամ, որից կատարվել են 498.0 հազար դրամի վճարումներ հարկերի գծով:

⚡ Կնքվել է 3 000 եվրո արժողությամբ պայմանագիր CIMEA (Իտալիա)-ի հետ SCAN-D2 ծրագրի իրականացման համար և կենտրոնին փոխանցվել է կանխավճար՝ 583.5 եվրոյին համարժեք 301.9 հազար դրամ:

⚡ Ֆրանսիայում Բոլոնիայի քարտուղարության միջազգային անձնակազմի Հայաստանի ներկայացուցչի մասնակցության համար (10 ամիս) պետական բյուջեից ստացվել է 4 422.8 հազար դրամի ֆինանսավորում, որը ամբողջությամբ ծախսվել է:

Համաձայն Հիմնադրամի մասին ՀՀ օրենքի՝ կենտրոնում պետք է իրականացվի աուդիտորական ստուգում, որի կապակցությամբ ներկայացվել է մի քանի աուդիտորական ընկերությունների կողմից տրամադրված գնային առաջարկներ և առաջարկվում է 2016թ. գործունեության աուդիտի իրականացման համար հաստատել «Երևան-Աուդիտ կոնսալտ» ՓԲԸ-ի թեկնածությունը: